

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 6-ի Կիրակի առաւօտեան, Ամերիկայի Միացեալ Նահանգաց առաջին Դեսպանը Հայաստանում՝ Տիար Հէրրի Կիլմոր, իր Տիկնոջ հետ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Յարգելի հիւրը, իր Տիկնոջ ընկերակցութեամբ ներկայացաւ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Վազգէն Վեհափառ Հայրապետին:

Ընդունելութեան ներկայ էին Կաթողիկոսարանի Դիւանապետ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսը և Մայր Աթոռում հիւրաբար՝ Տ. Տիրայր, Տ. Շահէ Արքեպիսկոպոսները և Հոգեշնորհ Տ. Փառէն Ծ. Վարդապետը:

Ներկայ էր նաև Կրօնական Գործերի Պետական Խորհրդի նախագահ Տիար Լիւդվիգ Խաչատուրեանը:

Ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը և իր հիւրերը առաջնորդուեցին Մայր տաճար, Եկեղեցական դասի թափօրի առաջնորդութեամբ:

Ս. Պատարագը մատոյց Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբեղան, իսկ օրուան քարոզը տուաւ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսը, նիւթ ունենալով Հոգեգալուստեան շնորհները: Քարոզի վերջում Սրբազանը յարգանքով ողջունեց Միացեալ Նահանգաց Դեսպանի ներկայութիւնը Մայր տաճարում:

Յաւարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետը և իր հիւրերը թափօրով առաջնորդուեցին Վեհարան: Նորին Սրբութիւնը ողջոյնի իր խօսքով արտայայտեց իր մեծ ուրախութիւնը, որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը դեսպանատուն հաստատած է Հայաստանում, մաղթելով, որ Ամերիկեան օգնութիւնը Հայաստանին, մարդասիրական լինելով հանդերձ, լինի նաև խաղաղաբեր: Նորին Սրբութիւնը շեշտեց յատկապէս թէ իրական խաղաղութեան հիմքն է արդարութիւնը և Լեռնային Ղարաբաղեան հարցի արդար մի լուծում կարող է իրապէս խաղաղութիւն բերել Կովկասում և վերջ տալ հայ ժողովրդի տառապանքներին և զրկանքներին:

Նորին Վսեմութիւնը և իր Տիկինը արտայայտեցին իրենց ստացած խոր տպաւորութիւնը Հայ Եկեղեցւոյ երգեցողութիւնից և Ս. Պատարագի խորհուրդից, յայտնելով իրենց մանկութիւնը յաճախ աղօթելու Էջմիածնի Մայր տաճարում:

Նորին Վսեմութիւնը ակնարկեց իր նախորդ այցելութեան Վեհափառ Հայրապետին, ընկերակցութեամբ Ամերիկեան ծերակուտականների և յայտնեց իր գնահատանքը Նորին Սրբութեան իմաստուն խորհուրդներում նկատ-

մամբ, փափաք յայտնելով, որ շարունակուեն անձնական հանդիպումները Հայաստանի հետ կապուած հարցերու շուրջ:

Նորին Վսեմութիւնը վստահեցուց թէ իր աւագ պարտականութիւնն է նկատում աշխատել և գործել ի խնդիր մնայուն խաղաղութեան, հիմնուած արդար լուծումների վրայ:

Կաթողիկոսական ոսկեմատեանին մէջ, մեծայարգ Դեսպանը արձանագրեց իր տպաւորութիւնները:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
8 Յունիս 1993



Հայաստանի Ազգային Գրադարան
17 ՀՈՒՆ 2007
Ստացուած է